Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
փետրվարի 4-ի նիստի N 4
արձանագրային որոշման

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ԱՇՁԲ-10/53 «ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան << >>_____2016թ.

Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունը, ի դեմս անձնագրային և վիզաների վարչության պետ Մնացական Բիչախչյանի, այսուհետև՝ <<Պատվիրատու>>, մի կողմից և <<Լեհական արժեթղթերի արտադրամաս>> /<<ՊՎՊՎ>>/ ԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Պյոտր Վոյցեխովսկիի և տնօրենների խորհրդի անդամ Սլավոմիր Գրելայի, որոնք գործում են Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ <<Կապալառու>>, մյուս կողմից, ի լրումն և ի փոփոխումն 28.07.2011թ.-ի թիվ ԱՇՁԲ-10/53 <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման աշխատանքների/ծառայությունների կատարման գնման>> Պայմանագրի, այսուհետև՝ <<Պայմանագիր>>, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 1.2 կետը լրացնել 1.2.8 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կապալառուն ընդունում է Համակարգի ներդրման շրջանակներում լրացուցիչ տեխնիկայի հանձնման, լիցենզիայի (համապատասխան ծրագրային ապահովման օգտագործման իրավունքի) տրամադրման, աշխատանքների իրականացման պարտավորությունը՝ Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում և Հավելված 2-ում սահմանված դրույթներին համապատասխան>>:

2. Պայմանագրի 1.2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.2.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կապալառուն ստանձնում է <<Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի, այդ թվում՝ դիվանագիտական անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման>> (այսուհետ՝ համակարգ) աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածի և թիվ 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի>>:

3. Պայմանագրի 1.2.4 կետը վերջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ պարբերություններով.

<<Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել և Պատվիրատուի կողմից նախապես ընտրված կոնկրետ վայրում Պատվիրատուին հանձնել կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի արտադրության համար անհրաժեշտ պլաստիկ քարտերի նմուշների (բլանկների), ինչպես նաև նույնականացման քարտերի համար անհրաժեշտ ծածկագրեր տպագրելու համար նախատեսված թղթի և դրանց համար նախատեսված ծրարների ներմուծում ու մատակարարում՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական պահանջների:

Կապալառուն պատվիրատուին պարտավորվում է մատակարարել վերը նշված նմուշները (բլանկները) հետևյալ քանակով՝ 1200 հատ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի նմուշներ, 600 հատ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային դիվանագիտական անձնագրերի նմուշներ և 2100 հատ էլեկտրոնային նույնականացման քարտերի նմուշներ՝ ,,նմուշ,, գրությամբ, որոնք չեն կարող օգտագործվել Աշխատանքների կատարման ընթացքում և անհրաժեշտ են միայն նյութերի պահանջների հետ համապատասխանության ստուգման համար>>:

4. Պայմանագրի 1.3 կետըլրացնել 1.3.1 ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

<<1.3.1 Հաշվի առնելով Պայմանագրի 1.2.4 կետում նշված նյութերի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի բլանկներ/գրքույկները, դրանց տպագրության համար անհրաժեշտ նյութերը Կապալառուի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներկրելու և Պատվիրատուի կողմից նախապես ընտրված վայր մատակարարելու պահից հանձնվում են ի պահ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ մինչ այդ նյութերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման պահը: Վերոնշյալ բլանկների և նյութերի նկատմամբ սեփականության իրավունքը Պատվիրատուին փոխանցվում է դրանց անհատականացումից հետո վերջիններիս վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին: Պայմանագրով նախատեսված վերջին վճարումը կատարելուց հետո մինչև Պայմանագրի ժամկետի ավարտը նշված բոլոր նյութերի (անկախ դրանք անհատականացված լինելուց), ինչպես նաև սույն Համաձայնագրով նախատեսված լրացուցիչ տեխնիկայի սեփականության և լիցենզիաների առարկա հանդիսացող ծրագրային ապահովման (ընդունման-հանձման ակտի ստորագրումից հետո) իրավունքները փոխանցվում են

Պատվիրատուին: Ընդ որում, մինչև Պատվիրատուին սույն կետում նշված նյութերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման պահն այդ նյութերը ենթակա են հաշվառման Կապալառուի հայաստանյան մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02252007) հաշվեկշռում>>:

5. Պայմանագրի 1.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը:>>

6. Պայմանագրի 2.2.2 ենթակետում <<N 2 հավելվածով>>բառերը փոխարինել <<4.2 կետով>>բառերով:

7. Պայմանագրի 2.2 կետում լրացնել նոր ենթակետեր՝ հետևյալ խմբագրությամբ.

<<2.2.4 Սույն պայմանագրի 1.2.1 կետով նախատեսված Աշխատանքների մեկնարկից հետո յուրաքանչյուր օրացույցային եռամսյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել տեղեկություն այդ եռամսյակում անհատականացված (կատարված) կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման պլաստիկ քարտերի, ինչպես նաև անհատականացման ընթացքում հայտնաբերված խոտանի վերաբերյալ:>>

<<2.2.5 Ժամանակին վճարել ստացված հարկային հաշվի գումարը: Վճարումների շարունակական ուշացումների դեպքում Կապալառուն իրավունք ունի կասեցնել Համակարգի շահագործման համար անհրաժեշտ նյութերի առաքումը:>>

8. Պայմանագրի 3.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Բացառությամբ պայմանագրի 3.4 կետի դրույթներով նախատեսված դեպքի՝ Կապալառուի մատուցած յուրաքանչյուր աշխատանքի արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում այն պահից, երբ վերջինս ստորագրի Կապալառուի կողմից ներկայացված Պայմանագրի 3.1 կետով սահմանված հանձնման-ընդունման արձանագրությունը:>>

9. Պայմանագրում լրացնել նոր 3.4 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<3.4 Այն դեպքում, երբ Պատվիրատուն Կապալառուին բողոք չներկայացնի կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի տպագրության համար անհրաժեշտ էլեկտրոնային նույնականացման քարտերի բլանկների/գրքույկների անհատականացման ընթացքում թերությունների համար, ինչպես նաև չկատարի սույն Պայմանագրի 2.2.4 կետում նշված պարտավորությունները, Կապալառուն օրացույցային եռամսյակի ավարտից հետո 14-րդ օրվանից հետո իրավասու է կազմել և ներկայացնել անհատականացված (իրացված) կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման

քարտերի համար հարկային հաշիվ՝ Համակարգից ձեռք բերված տեղեկությանը համաձայն, ինչն էլ միաժամանակ նշանակում է Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրության ընդունումը և պարտավորեցնում վճարելու ներկայացված հարկային հաշիվը: Պատվիրատուն մինչև Պայմանագրի ժամկետի ավարտը կարող է ցանկացած պահի Պայմանագրի 2.2.4 կետով ներկայացված տեղեկատվության շրջանակներում Կապալառուի մեղքով առաջացած խոտանի համար պահանջել 2.1.3 կետով սահմանված ձևերով վերացնել առաջացած թերությունները>>:

10. Պայմանագրի 4.1 կետում <<16.895.680 (տասնվեց միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) եվրո>> բառերը փոխարինել <<17.778.792(տասնյոթ միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր իննսուներկու) եվրո>> բառերով:

11. Պայմանագրի 4.1.1 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4.1.1 Սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի դիմաց վճարումը սկսում է կատարվել Պայմանագրի 1.2.1 կետին համապատասխան Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման գործընթացն ավարտելուց հետո միայն, տվյալ տարում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման պլաստիկ քարտերի իրացումից գոյացած Պատվիրատուի ֆինանսական միջոցներից (համաձայն հավելված N2-ի)՝ յուրաքանչյուր կենսաչափական կողմնորոշիչների պարունակող էլեկտրոնային անձնագրի համար 37,42 եվրո (ներառյալ 20% դրույքաչափով ԱԱՀ-ն), յուրաքանչյուր նույնականացման քարտի համար 5,52 եվրո (ներառյալ 20% դրույքաչափով ԱԱՀ-ն) գումար՝ ըստ Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ժամանակացույցի:

Վճարման ենթակա յուրաքանչյուր մասնաբաժնի չափը որոշվում է սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով յուրաքանչյուր փուլի վերաբերյալ կազմված հանձնման-ընդունման արձանագրությունում ներառված Աշխատանքի փուլային (եռամսյակային) արդյունքի միավորների և վերոհիշյալ միավորների գնի արտադրյալով:>>

12. Պայմանագրի 4.1.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4.1.2 Պայմանագրի կատարման վերջին եռամսյակում Կապալառուն ներկայացնում է իր կողմից մատակարարված և չիրացված կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման պլաստիկ քարտերի բլանկների տարբերության մասով վճարման հաշիվ՝ Պատվիրատուի կողմից ամբողջական վճարում իրականացնելու նպատակով:

Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի բլանկները համարվում են

Կապալառուի կողմից Պատվիրատուին մատակարարված, եթե դրանք հանձնվել են ի պահ Պատվիրատուի պահեստ:

Պատվիրատուի կողմից Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում մատակարարված են համարվում այն կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի բլանկները, որոնք ի պահ են հանձնվել Պատվիրատուին Պայմանագրի լուծման օրվան նախորդած մինչև 180 օրը:Այդ դեպքում Պայմանագրի կատարման օր է համարվում վերջին առաքման ամսաթիվը>>:

13. Պայմանագրում լրացնել նոր 4.4 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Պայմանագրով նախատեսված վերջին վճարումը կատարելու պահից Կապալառուի կողմից առաքված և Պատվիրատուին ի պահ հանձնված, բայց չանհատականացված բոլոր նյութերի (այդ թվում՝ նույնականացման քարտերի և կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրի բլանկների), ինչպես նաև սույն Համաձայնագրով նախատեսված լրացուցիչ տեխնիկայի սեփականության և լիցենզիաների առարկա հանդիսացող ծրագրային ապահովման(ընդունման-հանձման ակտի ստորագրումից հետո) նկատմամբ գույքային իրավունքները փոխանցվում են Պատվիրատուին>>:

14. Պայմանագրի 5.3-ի վերջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ նախադասությունը.

<<Սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում նշված սարքավորումների մատակարարման վերջնաժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Հավելված1-ում նշված սարքավորումների արժեքի 0,05%-ի չափով>>:

15. Պայմանագրի 5.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի4.2 կետով նախատեսված վերջնաժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:>>

16. Պայմանագրի 9-րդ կետում լրացնել Կապալառուի բանկային հաշվեհամարը՝ <<Հ/Հ 003 138922 001>> և բանկը՝ <<<<Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան>> ՓԲԸ>>:

17. Պայմանագրի թիվ 2 Հավելվածը (Գնման ժամանակացույց), շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Տարի	Կենսաչափական անձնագրեր (հատ)	Էլ. նույնականացման քարտ (հատ)	Մեկ կենսաչափական անձնագրի արժեքը	Մեկ էլ. նույնականացման քարտի արժեքը	Ընդհանուր արժեքը
2012	50 000*	150 000	37,42 եվրո	5,52 եվրո	2 699 000
2013	60 000	200 000	37,42 եվրո	5,52 եվրո	3 349 200

2014	64 000	210 000	37,42 եվրո	5,52 եվրո	3 554 080
2015	64 000	220 000	37,42 եվրո	5,52 եվրո	3 609 280
2016	89 600	220 000	37,42 եվրո	5,52 եվրո	4 567232
Ընդհանուր	327 600	1 000 000			17778792

**այդ թվում՝ 4000 հատ դիվանագիտական կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագիր*

18. Լրացուցիչ տեխնիկական միջոցների մատակարարման դիմաց լրացուցիչ 23600 հատ կենսաչափական անձնագրերի Պատվիրատուին մատակարարումըԿապալառուի կողմից իրականացվելու է 2016թ.-ի առաջին եռամսյակում, որոնք Պատվիրատուն պարտավորվում է ի պահ ընդունել Պատվիրատուի պահեստ:

19. Համաձայնագրի Հավելված 1-ը և Հավելված 2-ը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

20. Կապալառուն պարտավոր է իրականացնել Համաձայնագրով նախատեսված լրացուցիչ սարքավորումների մատակարարումը մինչև Պատվիրատուի գտնվելու վայրը (ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք), ըստ անհրաժեշտության մինչև Պայմանագրի ժամկետի ավարտըկատարել դրանց տեղադրման աշխատանքներ նաև տարածքային անձնագրային ստորաբաժանումներում, ծրագրային ապահովման տեղադրում, ինտեգրումը կենտրոնական համակարգին և վերջնական կոնֆիգուրացիան: Համաձայն Պայմանագրում նշված պահանջների՝ Կապալառուն պարտավոր է իրականացնել Համաձայնագրով լրացուցիչ սարքավորումների երաշխավորումը և հետագա սպասարկումը, ինչպես նաև լրացուցիչ բոլոր սարքավորումները համակարգին միացնելուց հետո համակարգի կենտրոնական սարքավորումների, սերվերների անխափան աշխատանքը:

21. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի ժամկետի ավարտը:

22. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

23. Սույն Համաձայնագիրը կազմվել է հայերենով և անգլերենով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և նույնական են, երկու օրինակ հանձնվում է <<Պատվիրատու>>-ին, մեկ օրինակ հանձնվում է <<Կապալառու>>-ին: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև հակասություն առաջանալու դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

24. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
00-222
Հայաստանի Հանրապետության
Ոստիկանություն
Հայաստան>> ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130
խորհդի
Հ/Հ 900011159044
Վոյցեխովսկի
Անձնագրային և վիզաների
վարչության պետ Մ. Բիչախչյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ.

Կապալառու

<<ՊՎՊՎ>> ԲԸ
ԼՀ, Վարշավա, Սան-Գուզսկի փ.,

Հ/Հ 003 138922 001
<<Էյչ-Էս-Բի-Սի բանկ

Ընկերության տնօրենների

նախագահ Պյոտր

_____

/ստորագրություն/
Կ.Տ.

Տնօրենների խորհրդի անդամ
Ս. Գրելա

_____

/ստորագրություն/

Հավելված 1.
<< >> _____ կնքված
<<2011թ. հուլիսի 28-ին կնքված թիվ ԱՇՁԲ-10/53>>
Պայմանագրի Համաձայնագրի

Տեխնիկական նկարագիր
Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի լրացուցիչ տեխնիկական միջոցների

Հավելված 1-ում սահմանված են Համաձայնագիր 3-ով նախատեսվող կենսաչափական կողմնորոշիչներ պարունակոն էլեկտրոնային անձնագրերի համակարգի լրացուցիչ սարքավորումների առանձնահատկությունները, երաշխիքային պայմանները, ընդունման չափանիշները, ծառայության մատուցման պայմանները և Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական նույնականացման քարտերի և անձնագրերի համակարգի համար սարքավորումների կոնֆիգուրացիան և ծրագրավորումը:

1. Սարքավորման և քանակի ընդհանուր տեխնիկական բնութագիրը

Յուրաքանչյուր կետում նշված քանակական տվյալները բխում են Պատվիրատուի պահանջներից և Կապալառուի գնահատականից: Արտադրությունը և ստույգ մոդելները սահմանվել են ներկայումս կիրառվող սարքավորումների և ծրագրավորման հիման վրա այնպես, որ համակարգը լինի համընդհանուր՝ հնարավորություն տալով դրա միջոցով ծառայության մատուցումը, ծրագրերի տեղադրումը և համատեղելիությունը Համակարգի մյուս գործող բաղադրիչների հետ:

Հ/Հ	Սարքավորում	Քանակ
1	LCSS կայան մոնիտորի հետ	65
2	LCSS շարժական կայան	15
3	Կենսաչափական ընթերցող սարք (մատնահետք)	80
4a	Կենսաչափական փաստաթղթեր ընթերցող սարք	70
4b	Կենսաչափական փաստաթղթեր ընթերցող սարք	17
5	Լուսանկարչական համասարք (տեսախցիկ, ոսպնյակ)	80
6	Լուսանկարչական համասարքի համար շտատիվ	65
7	Ստորագրության համար պլանշետներ	80
8	Չիպային քարտերի ընթերցող սարք	2087
9	Լիցենզիաներ neuroTechnology	80
10	Լիցենզիաներ Cognitec	80
11	Անձնագրային տպիչ	2
12	Լամինատոր անձնագրերի համար	2
13	PE/QA կայան անհատականացման/վերահսկողության համար	7
14	Պին կոդ տպագրող սարք PIN printer: OKI microline 5100fb - 24pin	4

Ստորև նշված են սարքավորումների մատակարարման և կոնֆիգուրացիայի ժամկետները.

1. **Ժամկետ 1**: Առավելագույնը 180 օր՝ մատակարարման Հավելված թիվ 3-ի ստորագրման պահից մինչև Հայաստանի Հանրապետությունում մաքսային ձևակերպումը և 30 օր՝ սարքավորման մաքսազերծումից մինչև դրա առաքումը Պատվիրատուին;

a. LCSS Կայաններ մոնիտորների հետ և LCSS շարժական կայաններ,

b. Կենսաչափական և կենսաչափական փաստաթղթեր ընթերցող սարքեր,

c. Լուսանկարչական համասարքեր շտատիվների հետ միասին,

d. Ստորագրության համար պլանշետներ և չիպային քարտերի ընթերցող սարքեր

e. Լիցենզիաներ neuroTechnology i Cognitec,

f. PE/QA կայաններ մոնիտորներով,

g. ՊԻՆ կոդ տպող սարքեր:

2. **Ժամկետ 2**: 180 օր՝ մատակարարման Հավելված թիվ 3-ի ստորագրման պահից մինչև Հայաստանի Հանրապետությունում մաքսային ձևակերպումը և 30 օր՝ սարքավորման մաքսացերծումից մինչև դրա առաքումը Պատվիրատուին;

a. Անձնագրային տպիչ սարքեր,

b. Լամինատորներ անձնագրերի համար:

2. Տեղադրում և կոնֆիգուրացիա

Մատակարարված սարքավորումների շրջանակներում Կապալառուն կապահովի LCSS ստացիոնար համակարգիչների, LCSS նոթբուքների և անհատականացման ու վերահսկողության համար համակարգիչների տեղադրման և կոնֆիգուրացիայի ծառայությունները, դրանք են՝

- neuroTechnology i Cognitec լիցենզիայի տեղադրում,
- LCSS ծրագրավորման տեղադրում և կոնֆիգուրացիա,
- PE i QA ծրագրավորման տեղադրում և կոնֆիգուրացիա,
- ARH ընթերցող սարքերի համար ծրագրավորման տեղադրում ,
- WACOM պլանշետների համար ծրագրավորման տեղադրում,
- (OKI, Diletta) Տպիչ սարքերի սպասարկման համար ծրագրավորման տեղադրում, կոնֆիգուրացիա և տպման կարգավորում,
- Լուսանկարչական կայանների տեղադրում և կոնֆիգուրացիա (լուսանկարչական ապարատ Canon, LCSS կայան),
- Մատակարարված սարքավորման ցանցային կոնֆիգուրացիա,
- Պոլիմերային թաղանթի տեղադրում և լամինատորների ստուգում,
- (LCSS/PE/QA) ծրագրավորման աշխատանքի և (ARH, WACOM, SCM, OKI i Diletta տպիչ սարքավորումներ, լուսանկարչական սարքավորում) սարքավորումների հետ համատեղ աշխատանքի ստուգում:

Սարքավորումը կկոնֆիգուրացվի Պատվիրատուի կենտրոնական վայրում /Հայաստանի Հանրապետության Ոստիկանություն, կենտրոնական ԱՎՎ, Central OVIR/, կստուգվի և կտրամադրվի պատվիրատուին:

Կոնֆիգուրացիան ապահովում է սարքավորման նախապատրաստումն արտադրական միջավայրում գործող ներկայումս տեղակայված համակարգչային սարքավորման հետ:

Պատվիրատուն ունի ապրանքը պահեստավորելու համար բավարար տարածք, միաժամանակ ապահովում է համապատասխան պայմանները /ջրազուրկ տարածք, սենյակային ջերմաստիճան, հատակի բավարարամրություն, հասանելիություն դեպի էլեկտրական վարդակներ և համակարգչային ցանց/:

Ծառայության մատակարարման շրջանակներում Կապալառուն կմատակարարի և կկարգավորի մատակարարված սարքավորումները Պատվիրատուի կենտրոնական վայր, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ՀՀ տարածքային անձնագրային ծառայություններ:

3. Ընդունման չափանիշները

ՊՎՊՎ-ի կողմից մատակարարված սարքավորումների ընդունումը պետք է իրականացվի 2 արձանագրությունների հիման վրա.

- **Քանակի ընդունման արձանագրություն**

Սարքավորումների ստուգումն ու արձանագրության ստորագրումն իրականացվում է բոլոր մատակարարված սարքավորումների և լեցենզիաների հաշվարկի հիման վրա: Հաշվարկն իրականացվում է պատվիրատուի մասնակցությամբ և արձանագրությունը ստորագրվում է անմիջապես նույն աշխատանքային օրը: Առանց հիմնավոր պատճառ նշելու Պատվիրատուի կողմից ստորագրության բացակայության դեպքում, այն ընդունվում է ստորագրված արձանագրությանը հավասար:

Կողմերը պարտավորվում են քանակային ընդունումն ավարտել ապրանքի մատակարարման օրը քանակի ընդունման արձանագրություն ստորագրելու միջոցով:

- **Որակի ընդունման արձանագրություն**

Ստուգումը կայանում է կոնֆիգուրացված աշխատանքային կայանի պատահական վերֆիկացիայով, լրացուցիչ ամբողջական աշխատակայանների հետ միասին, հետևյալ քանակով՝

- 10 հատ LCSS համակարգիչ
- 3 հատ շարժական կայան
- 1 հատ կենտրոնական կայան

Ստուգումը հիմնվելու է արտադրական համակարգում կայանի բանացման և դրա ֆունկցիոնալության վերիֆիկացման վրա: Ընդունվում է, որ սարքավորումը ճիշտ է կոնֆիգուրացված, եթե Կապալառուի կողմից իրականացված և սպասարկված Հայաստանի Հանրապետությունում նույնականացման քարտերի և կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրերի արտադրական համակարգի աշխատանքը ճիշտ է ընթանում: Կոնֆիգուրացիայի և տեղադրման բացահայտված սխալները, որոնք արտադրական համակարգում խոչընդոտում են աշխատանքը, կշտկվեն Կապալառուի կողմից: Սարքավորման հետ կապված սխալները (hardware-ի վթարը) կշտկվեն սարքավորման արտադրողի կողմից երաշխիքի հիման վրա:

Ստուգումն իրականացվում է պատվիրատուի մասնակցությամբ և արձանագրությունը ստորագրվում է անմիջապես նույն աշխատանքային օրը:

Առանց հիմնավոր պատճառ նշելու Պատվիրատուի կողմից ստորագրության բացակայության դեպքում, այն ընդունվում է ստորագրված արձանագրությանը հավասար: Արձանագրության օրինակը ներկայացված է սույն Հավելվածի Հավելված 2-ում:

4. Երաշխիքային և սպասարկման պայմանները

Կապալառուն ապահովում է գործարանային, բոլորովին նոր սարքավորումների մատակարարում, որոնք ընդգրկված են արտադրողի հիմնական երաշխիքով: Սերվիսային սպասարկումը կատարվում է նույն կերպ, ինչպես ներկայումս արտադրական համակարգում շահագործվող սարքավորուներինն է, այսինքն՝ սարքավորումների և ծրագրավորման հետ կապված ցանկացած վթարի մասին անհրաժեշտ է տեղեկացնել Կապալառուին և Կապալառուի անունից համակարգի սպասարկումն իրականացնող HS&A կազմակերպությանը: Պատվիրատուի մեղքով ծագած ցանկացած վթար (ջրի լցվելը, այրումը, սարքավորման կորուստը, ոչնչացումը) կարող են վերանորոգվել Կապալառուի կողմից, որի ծախսերն իրականացվելու է Պատվիրատուի հաշվին:

5.Սարքավորմանմանրամասնտեխնիկականնկարագիրը

Հ/Հ	Անվանումը և նկարագիրը
1.	OptiPlex 3020 Micro Components 1 OptiPlex 3020M Micro BTX Base 1 Optiplex 3020M Chassis 1 TPM Enabled 1 Intel Core I34160T (Dual Core 3.1GHz 3MB w/HD4400 Graphics) 1 4GB (1x4GB) 1600MHz DDR3 Memory 1 500GB 2.5inch Serial ATA (7,200 Rpm) Hard Drive 1 PowerDVD Software not included 1 EU power cord 1 PDU 65W 1 Dell OptiPlex 3020M Regulatory label 1 No Wireless Included 1 No Stand included 1 Dell mouse USB MS111 1 Keyboard : Russian (QWERTY) Dell KB212B QuietKey USB Keyboard Black 1 Dell Applications for Windows 7 1 Fixed Hardware ConfigurationSoftware 1 Windows 7 Professional (32Bit) English 1 Windows 7 Professional (32Bit) Resource DVD 1 Microsoft Office 2013 Trial 1 Dell Backup And Recovery Basic 1 McAfee Security Center, 30-days Trial 1 Dell Data Protection System Tools 1 HUB USB (7 ports) Dell 17 Monitor | E1715S 43cm(17`) Black EUR
2.	Latitude E55501 Motherboard Intel Core i35010U Graphic card Intel HD Graphics 5500 1 5th Generation Intel Core i35010U (Dual Core, 2.1GHz, 3M cache) 1 39.6cm (15.6`) FHD (1920x1080) NonTouch AntiGlare LCD 1 Smart Card Reader (Dual Pointing) Palmrest 1 NonTouch FHD LCD Back Cover with Camera and WWAN antenna 1 4GB (1x4GB) 1600MHz DDR3L Memory

	1 500GB 2.5inch Serial ATA (7,200 Rpm) Hard Drive 1 European powercord 1 Basic battery 62Wh 1 No RFID Label for Palmrest 1 65W AC Adapter, 3pin 1 Intel Dual Band WirelessAC 7265AC 802.11ac/a/b/g/n 2x2 + Bluetooth 4.0 LE Half Mini Card 1 Intel Dual Band Wireless 7265 Driver 1 7MM Hard Drive Bracket 1 Internal Russian Qwerty Backlit Keyboard 1 Waves Maxx Audio Royalty 1 Additional Software Software 1 Windows 7 Professional (32 bit) English 1 MUI Windows 7 Professional (32Bit OS) Resource DVD 1 Microsoft® Office 2013 Trial 1 Dell Backup And Recovery Basic 1 Adobe Reader 11 1 Dell Data Protection | Security Tools Digital Delivery/NB 1 MY DELL 1 McAfee Security Center, 30-days Trial 1 IntelManagement Engine Components Installer Service 1 Asset Service System & Shipbox Label (Model, Svc Tag, Order Information, Basic Config Details) 1 HUB USB (7 ports) Laptop Bag
3.	Fingerprint scanner: ARH AFS510 Mechanical Data: Size: 154 x 141 x 157 mm Platen size: 91 x 78mm Effective scanning size: 84 x 77mm Case: 100% protective metal case Operating temperature:+5°C to +40°C Weight : 2.98 kg Optical Specifications: Image resolution: 500 dpi Image colour: grayscale Other Specifications: Scanning 10 fingerprints Intelligent indicator system Interface: USB 2.0 Kensington security slot Image format and quality: FBI Standard IAFIS IQS Appendix 7 ANSI/NIST-ITL-1-2007 ANSI/NIST-ITL-1-2000 ISO/IEC FCD 19794-4 WSQ compression
4a.	OCR RFID and Smart Card reader: ARH PRMc123RSU
4b.	Identive SDI 011 Dual Interface Reader
5.	Photo camera: Canon EOS 1100D / 1200D Lens: Canon EF-S 18-55mm f/3.5-5.6 IS II
6.	Photo camera stand for biometric face photo: ELFO SKT03 Photo camera stand SKT03 ready to use Canon EOS 1100D/1200D with lens, Power cord, USB cable, White backdrop with backdrop stand ready to mount on the slink min. 100x140cm.
7.	Signature pad: WACOM STU-300/430
8.	Smart Card Reader: Identive SCR3310
9.	License Neurotechnology VeriFinger
10.	License Cognitec FaceVACS
11.	Passport Printer DILETTA passport printer i700 Dimensions Width x Depth x Height: 550 x 510 x 190 mm or less Weight: approx. approx. 16 kg Printer Driver Windows 7 (32 & 64-Bit Versions)

	Windows 2000, 2003, XP and Vista Linux: with generic PCL3 driver Interfaces Hi-Speed USB 2.0 port Printing Time (in continuous print mode) 1) Standard print mode (plain paper mode): 9-14 seconds or less High quality mode (plain paper mode): 9 - 26 seconds or less Resolutions Monochrome: up to 1200 x 1200 dpi Colour: up to 4800 x 1200 dpi
12.	Passport laminator DILETTA RL90 Lamination TemperatureRange: 40 - 180 °C (104 - 266 °F) LaminatingSpeed: 18 - 30 sec. per passport Heat up time (130°C): approx. 120 sec. Technology CPU: 16-Bit micro controller with 20 MHz Laminating Method: Heat roll, micro processor controlled Dimensions Width x Depth x Height: 360 x 240 x 220 mm³ Weight: approx. 16 kg
13.	OptiPlex 3020 MT Components 1 OptiPlex 3020 Minitower BTX 1 OptiPlex 3020 Minitower Chassis w/ up to 85 Percent Efficient PSU (Bronze V2) 1 Intel Core i34160 (3,6GHz, 3MB, graphic HD4400 Graphics) 1 4GB (1x4GB) NonECC DDR3 1600MHz SDRAM Memory 1 500GB 3.5inch Serial ATA (7.200 Rpm) Hard Drive 1 Minitower Chassis Mainstream Heatsink (65watts) 1 16X Half Height DVD+/RW Drive 1 PowerDVD Software not included 1 European Power Cord 1 Chassis Intrusion Switch 1 Intel Integrated Graphics,OptiPlex 1 Internal Dell Business Audio Speaker 1 No Bcom required 1 Dell mouse USB MS111 1 Keyboard : Russian (QWERTY) Dell KB212B QuietKey USB Keyboard Black 1 Fixed Hardware Configuration Software 1 Windows 7 Professional (32Bit) English 1 Windows 7 Professional (32Bit) Resource DVD 1 Microsoft Office 2013 Trial 1 Dell Backup And Recovery Basic 1 Dell Applications for Windows 7 1 Przygotowanie dostawy cyfrowej 1 Nie wybrano w tej konfiguracji 1 McAfee Security Center, 30-days Trial 1 Dell Data Protection System Tools Monitor P2214H 54.6 cm (21.5``) LED DP (1920x1080) Black EUR 1 HUB USB (7 ports)
14.	PIN printer: OKI microline 5100fb - 24pin

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
00-222
Հայաստանի Հանրապետության
Ոստիկանություն
Հայաստան>> ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130
խորհդի
Հ/Հ 900011159044
Վոյցեխովսկի
Անձնագրային և վիզաների
վարչության պետ Մ. Բիչախչյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ.

Կապալառու

<<ՊՎՊՎ>> ԲԸ
ԼՀ, Վարշավա, Սան-Գուզսկի փ.,

Հ/Հ 003 138922 001
<<Էյչ-Էս-Բի-Սի բանկ

Ընկերության տնօրենների

նախագահ Պյոտր

_____

/ստորագրություն/
Կ.Տ.

Տնօրենների խորհրդի անդամ
Ս. Գրելա

_____

/ստորագրություն/

Հավելված 2.
<< >> _____ կնքված
<<2011թ. հուլիսի 28-ին կնքված թիվ ԱՇՁԲ-10/53>>
Պայմանագրի Համաձայնագրի

Քանակական և գնային տվյալներ
Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի լրացուցիչ տեխնիկական միջոցների

Սարքավորումների խումբը	Սարքավորումների անվանումը	Քանակությունը	Միավորի գինը /եվրո/	Ընդհանուր արժեքը /եվրո/
Установка LCSS				**350957**
	Համակարգիչ, Մոնիտոր, 17" DELL Компьютер с монитором LCD	65	786	51071
	Մատնահետքեր կարդացող սարք, считыватель ARH	80	966	77273
	Անձնագիր կարդացող սարք, считыватель OCR	87	926	80589
	Ֆոտոապարատ հիշողության քարտով, Canon набор фото	80	400	32000
	Ֆոտոլուսարձակ, Стенд с лампой SKT-03	65	655	42600
	Ստորագրության սարք, Таблет для подписи WACOM	80	205	16400
	Քարտ կարդացող սարք, считыватель карт SCM	2087	10	20870
	Կենսաչափական ծրագրի Լիցենզիա, лицензия Neuro I Cognitec 290 25	80	377	30154
Տպիչ սարք, Принтеры Diletta		**2**	**10200**	**20400**
Центральная Установка				**13230**
	Համակարգիչ մոնիտորի հետ միասին, DELL Komputer z monitorem	7	1890	13230
Շարժականկայան, LCSS Установка Мобильная				**22500**
	Նոտբուկ, Laptop	15	1500	22500
Անձնագրիլամինացիոնսարք, ламинаторы для паспортов		**2**	**6405**	**12810**
Պին կոդ տպագրող սարք, Принтеры PIN		**4**	**403**	**1610**

Ընդամենը, Сумма EUR				**421507**
Լրացուցիչ ծախսեր				
	Լրացուցիչտեխնիկայիսպասարկմանարժեք, стоимость дополнительного сервиса			18000
	Տրանսպորտային ծախսեր, транспорт			20000
	Տեղադրմանհետկապվածծախսեր, Установка и конфигурация			3000
	Հարկերևմաքսայինվճարներ налогиитаможенные затраты			118005
	Լրացուցիչ քանակությամբ կենսաչափական անձնագրերի տպագրություն և մատակարարում			302 600
Ընդամենը, Сумма EUR				883 112
Մեկ կենսաչափական անձնագրի համար հաշվարկվող նետտո արժեք, Стоимость паспорта				**37.42**
Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի լրացուցիչ քանակություն, количество паспортов для потушения затрат связанных с дополнителной оборудования				**23600**

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
00-222
Հայաստանի Հանրապետության
Ոստիկանություն
Հայաստան>> ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130
խորհդի
Հ/Հ 900011159044
Վոյցեխովսկի
Անձնագրային և վիզաների
վարչության պետ Մ. Բիչախչյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ.

Կապալառու

<<ՊՎՊՎ>> ԲԸ
ԼՀ, Վարշավա, Սան-Գուզսկի փ.,

Հ/Հ 003 138922 001
<<Էյչ-Էս-Բի-Սի բանկ

Ընկերության տնօրենների

նախագահ Պյոտր

_____

/ստորագրություն/
Կ.Տ.

Տնօրենների խորհրդի անդամ
Ս. Գրելա

_____

/ստորագրություն/